Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների, բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և նախարարի կողմից քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2013 թվականի ապրիլ-հունիս ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը քաղաքացիներից ստացել է թվով 92 առաջարկություն, դիմում և բողոք, որից՝ 14-ը համապատասխան հանձնարարականներով վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից

Դիմումները՝ ըստ բնույթի	**Ընդամենը**	**Պատասխանվել է**	**Տրվել է դրական լուծում**	**Տրվել է պարզաբանում**	**Մերժվել է**	**Ծանոթություն**
Գյուղատնտեսական կենդանիների անկման պատճառները բացահայտելու, անասնաբուժական միջոցառումներ իրականացնելու և խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած կենդանիների դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	3	3	2	1		1 դիմումատուի պարզաբանվել է, որ համայնքային հանձնաժողովի կողմից դիմումատուին պատկանող աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր ոչնչացված խոզերի վերաբերյալ լիազոր մարմին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ամփոփագիր չի ներկայացվել:
Առանց ավելացված արժեքի հարկի հաշվարկման և գանձման սերմացուների ներմուծման ենթակա լինելու վերաբերյալ եզրակացություն տրամադրելու մասին	9	9	9			
Բույսերի պաշտպանության քիմիական ու կենսաբանական միջոցների վաճառքի և թորած ալկոհոլային խմիչքների ու	5	5	5			

էթիլային սպիրտի արտադրության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին						
Վարկ տրամադրելու մասին	3	3		3		1 դիմումատուի պարզաբանվել է, որ անասնապահական տնտեսությունը վերագործարկելու նպատակով համեմատաբար մատչելի պայմաններով վարկային միջոցներից օգտվելու համար անհրաժեշտ է դիմել <<ՓՄՁ ներդրումներ>> ունիվերսալ վարկային կազմակերպություն>> ՓԲԸ-ին և <<Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն>> հիմնադրամին: 2 դիմումատուի պարզաբանվել է վարկերի տրամադրման պայմանները և առաջարկվել դիմել համապատասխան բանկերին և վարկային կազմակերպություններին՝ ներկայացնելով համապատասխան գործունեության համար գործարար ծրագիր և այլ փաստաթղթեր, որոնք կպահանջվեն վերջիններիս կողմից: Վարկային ռիսկն ամբողջությամբ կրում են բանկերն ու վարկային կազմակերպությունները, հետևաբար նրանք են որոշում և ընտրում վարկ ստացող անձանց, որոնց գործունեությունը համապատաս-

						խանում է իրենց վարկավորման կարգին: Միաժամանակ պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն իրավասու չէ միջամտել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությանը:
Հանրապետություն ներկրվող տոհմային երինջների խմբաքանակից երինջներ հատկացնելու մասին	9	9		9		9 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց դիմումները վերցված են հաշվառման և 2013 թվականին հանրապետություն ներկրվող երինջների խմբաքանակից հնարավորության սահմաններում նրանց խնդրանքը կբավարարվի:
Անտառային հողատարածք վարձակալության տրամադրելու, վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու, անտառային տարածքներում կենդանիներ արածեցնելու թույլտվություն տալու մասին	9	9		9		6 դիմումատուի պարզաբանվել է, որ անտառային հողերի վարձակալության իրավունքը տրամադրվում է ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի N316-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ մրցույթի միջոցով: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կհայտարարվի մրցույթ, որի մասին հրապարակային ծանուցում կտեղադրվի www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների և www.minagro.am կայքում: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ համայնքներին պատկանող

						հողերը վարձակալության են տրամադրվում համայնքների ղեկավարների կողմից՝ մրցութային կարգով: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ անտառային հողը խոտհնձի նպատակով օգտագործելու համար անհրաժեշտ է <<Հայանտառ>> ՊՈԱԿ ներկայացնել հայտ՝ համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի N 806-Ն որոշմամբ հաստատված N1 ձևի: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ անտառներում խոշոր և մանր եղջերավոր անասունների արածեցումը համարվում է անտառային օրենսդրության խախտում:
Կարտոֆիլի և կաղամբի բերքի իրացման, մթերված լոլիկի դիմաց ֆինանսական պարտավորությունների կատարման համար միջնորդելու և աշխատավարձի պարտքը մարելու մասին	5	5		5		2 դիմումատուի պարզաբանվել է, որ հանրապետությունում 2012 թվականին արտադրվել է 2011 թվականի համեմատությամբ 30 հազար տոննայով ավելի կարտոֆիլի բերք: 2013 թվականի մայիսի 16-ի դրությամբ մթերվել և արտահանվել է 4280 տոննա կարտոֆիլ: 2 դիմումատուի պարզաբանվել է, որ նախարարությունը բանակցություններ է վարում <<Սպայկա>> ՍՊԸ-ի հետ կաղամբի մթերումներ իրականացնելու

						ուղղությամբ: 1 դիմումատուի տեղեկացվել է, որ <<Արեգա>> պահածոների գործարան>> ՍՊԸ-ի տնօրենը պարտավորվել է մարել աշխատավարձի պարտքը:
Գյուղատնտեսական տեխնիկա հատկացնելու և վարձակալած տեխնիկան սեփականաշնորհելու, արտերկրից ներկրվող տրակտորը մաքսատուրքի վճարումից ազատելու արտոնություն տրամադրելու գործում օժանդակելու մասին	6	6		6		3 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից աշխատանքներ են տարվում հանրապետություն գյուղատնտեսական տեխնիկա ներկրելու ուղղությամբ: Ներկրվելիք գյուղատնտեսական տեխնիկան տրամադրվելու է լիզինգային եղանակով երկարաժամկետ վճարման պայմանով: Լիզինգային եղանակով տեխնիկա ձեռք բերելու պատրաստակամության դեպքում տեխնիկայի ցանկն անհրաժեշտ է տրամադրել մարզպետարանին՝ պահանջարկն ամփոփելու և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը տրամադրելու համար: 2 դիմումատուի պարզաբանվել է, որ վարձակալական պայմանագրերի պահանջներին համապատասխան հաշվարկված վարձավճարները և տույժերը վճարած վարձակալները հնարավորություն ունեն ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերելու վարձակալած

						գյուղատնտեսական տեխնիկան: ՀՀ գյուղատնտեսության նախարարի համապատասխան հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովը հայտարարել է աճուրդին մասնակից շահառուների մրցույթ: Հանձնաժողովի կողմից շահառու ճանաչվելու դեպքում դիմումատուները հնարավորություն կունենան մասնակցել գյուղատնտեսական տեխնիկայի իրացման աճուրդին: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա ապրանքների ցանկում տրակտորները ներառված են: Հարցի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումների համար անհրաժեշտ է դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:
Կարկտահարության հետևանքով կրած վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	3	3		3		3 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարությունն որոշել է 100 տոկոս կորուստ ունեցող համայնքներում ամբողջությամբ հատուցել հողի հարկի վճարները: Մնացած համայնքներում, որտեղ կորուստները կազմում են 20, 30 և

						50 տոկոս, համաձայն ներկայացված ցուցակների, հողի հարկի վճարները կհատուցվեն ըստ կորստի աստիճանի: Նույն սկզբունքով օժանդակություն կցուցաբերվի ջրի վարձերի վճարման գործում: Առևտրային բանկերից և վարկային կազմակերպություններից գյուղատնտեսությունում տնտեսավարողների վերցրած արտարժութային վարկերը կփոխարինվեն դրամային վարկերով: Առևտրային բանկերի կողմից աղետից տուժած վարկառուներին օգնություն է տրամադրվելու անհատույց բանակցային գործընթացների միջոցով՝ հաշվի առնելով վարկերի ծավալները, ժամկետայնությունը, գումարները, գրավադրված առարկաները և այլ գործոններ: ՀՀ Արմավիրի մարզում նախատեսված է տեղադրել հակակարկտային 50 կայան:
Կարկտահարությունից այգիներն ու պտղատու ծառերը կպրակալի (ցելոֆանի) ծածկոցով պատելու միջոցով պաշտպանության մեթոդը կիրառելու մասին	2	2		2		2 դիմումատուի խնդրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության էլեկտրոնային փոստին ուղարկել ավելի մանրամասն տեղեկատվություն կարկուտի դեմ կպրակալի (ցելոֆանի) ծածկոցով պատելու միջոցով պաշտպանության մեթոդի վերաբերյալ և

						հետագայում՝ անհրաժեշտության դեպքում, համագործակցության համար ներկայացնել կոնտակ-տային տվյալները:
Սահմանամերձ համայնքներում հողի մշակության պայմաններ ստեղծելու, խմելու ջրի և գազի մատակարարումը կարգավորելու մասին	2	2		2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ պետական քաղաքականության մեջ տարբերակված մոտեցում է ցուցաբերվում սահմանամերձ, բարձրլեռնային համայնքների նկատմամբ: Իրականացվում են գյուղատնտեսական մշակաբույ-սերի սերմնաբուծության և սերմարտադրության, տոհմային անասնապահության զարգացման, բույսերի առավել վտանգավոր և կարանտին հիվանդությունների դեմ կենտրոնացված պայքարի, գյուղատնտեսական կենդանիների և մարդկանց համար առավել վտանգավոր հիվանդությունների դեմ կանխարգելիչ և կանխորոշիչ միջոցառումների իրականացման, վարկերի տրամադրման և ոլորտում օգտագործվող նյու-թական ռեսուրսների մատ-չելիության բարձրացման, կոոպե-ռացիայի խթանման և այլ ծրագրեր:
Ցորենի էլիտար սերմացուի ցածր ծլունակության հետ կապված փոխատվության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին	3	2		2		1 դիմում ընթացքի մեջ է: 2 դիմումատուի առաջարկվել է ներկայանալ <<Սերմերի գործա-կալություն>> ՊՈԱԿ ստացված

						յուրաքանչյուր կիլոգրամ էլիտային վերատադրության սերմացուի դիմաց 700 դրամի փոխարեն 420 դրամ վճարելու համաձայնագիր կնքելու համար:
2013 թվականի սերմացու, ազոտական պարարտանյութ, դիզելային վառելանյութ հատկացնելու մասին	3	3		3		3 դիմումատուի պարզաբանվել է, որ համաձայն մարզպետարանների կողմից ներկայացված պահանջարկի՝ հանրապետություն է ներկրվում սերմացու, ազոտական պարարտանյութ և դիզելային վառելանյութ, որոնք հատկացվելու են մարզերի նախնական հայտ ներկայացրած և վճարում կատարած տնտեսավարողներին:
<<Թամարա Ֆրութ>> ՓԲԸ-ի կողմից իրականացվող օրգանիկ այգիների հիմնման ծրագրում ընդգրկելու մասին	2	2		2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարի 25.05.2009թ N 137-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կուսումնասիրվի նրանց հողատարածքները: Անհրաժեշտ պայմանները բավարարելու դեպքում կքննարկվի նրանց ծրագրում ընդգրկելու հարցը:
Տեղեկատվություն տրամադրելու մասին	2	2	2			
Գյուղատնտեսության տարբեր ոլորտներում ծրագրային առաջարկներ իրականացնելու մասին	5	5		5		5 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվող ծրագրերում հաշվի կառնվեն

						նրանց ներկայացրած առաջարկությունները:
Պարարտանյութի սահմանված գնից բարձր գնով վաճառքն արգելելու մասին	2	2	2			
Արխիվային տեղեկանք տրամադրելու մասին	6	6	5	1		1 դիմում վերահասցեագրվել է <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ:
Ծառայությունների մատուցման պայմանագրով աշխատած ժամանակահատվածում ստացած աշխատավարձի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու մասին	3	3		3		3 դիմումատուի պարզաբանվել է, որ ծառայությունների մատուցման պայմանագիրը գործել է մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը և նրանք ազատվել են աշխատանքից պայմանագրի ժամկետը լրանալու պատճառով: 2013 թվականին պայմանագիր է կնքվել այն անասնաբույժ-մասնագետների հետ, որոնք ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն: 2013 թվականին նախատեսվում է անասնաբուժության ոլորտում իրականացնել բարեփոխումներ և հնարավորության դեպքում նրանց աշխատանքի ընդունելու վերաբերյալ խնդրանքը հաշվի կառնվի:
Տարաբնույթ հարցեր (համայնքին պատկանող արոտավայրերը հետ վերադարձնելու գործում աջակցելու, արոտավայրի վարձավճարի բարձրացման պատճառները պարզաբանելու, վարելահող հատ-	10	8	1	7		1 դիմում վերահասցեագրվել է ՀՀ Արագածոտնի մարզպետարան, 1 դիմում՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, 1 դիմում՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի

կացնելու, հողի կատեգորիան փոխելու և այլնի մասին)						կադաստրի պետական կոմիտե, 1 դիմում՝ ՀՀ Կոտայքի մարզ-պետարան: 2 դիմում ընթացքի մեջ է:
ԸՆԴԱՄԵՆԸ	**92**	**89**	**26**	**63**		**3 դիմում ընթացքի մեջ է:**

2. 2013 թվականի ապրիլ-հունիս ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կատարվել է քաղաքացիների 60 ընդունելություն

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	Ընդամենը	Պատասխանվել է	Տրվել է դրական լուծում	Տրվել է պարզաբա-նում	Մերժվել է	Ծանոթություն
Մշակաբույսերի վնասատուների և տարբեր հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ ծավալելու գործում մասնագիտական խորհրդատ-վություն տրամադրելու մասին	6	6	6			
Կարկտահարության հետևանքով այգի-ների կրած վնասների դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	15	15		15		
Պտղատու այգիների խնամքի հետ կապված մասնագիտական խորհրդատ-վություն տրամադրելու մասին	4	4		4		
Աշխատանքով ապահովելու մասին	1	1		1		
Գյուղատնտեսական մթերքների արտա-հանման կարգի վերաբերյալ տեղե-կատվություն տրամադրելու մասին	1	1	1			
Գյուղատնտեսական տեխնիկա հատ-կացնելու մասին	2	2		2		
Գյուղատնտեսական բացօթյա շուկայի տարածքում վաճառասեղան հատկաց-նելու մասին	3	3	3			
Գյուղատնտեսական վարկ տրամադրելու մասին	2	2		2		

Տոհմային երինջներ հատկացնելու մասին	10	10	10			
Սպանդանոցներ ստեղծելու մասին	5	5		5		
Մեղվաբուծության զարգացման մասին	2	2		2		
Ձկնաբուծության ոլորտում առկա հիմնախնդիրների մասին	4	4		4		
Արարատյան հարթավայրում ձկնա-բուծական կիսափակ համակարգին անցնելու մասին	5	5		5		
ԸՆԴԱՄԵՆԸ	**60**	**60**	**20**	**40**		